ՀՏԴ 37.06 Հոգեբանություն

ՍՏԱՅԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիոլա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր. *բարձրագույն կրթություն, շրջանավարտ, սոցիոլոգիական հարցում, հարցման արդյունքներ, սոցիալական չափում, կրթության որակի կառավարում, բավարարվածություն, բակալավր, մագիստրոս, կրթական ծրագրեր, տվյալների ցրում, մեթոդի արժանահավատություն, առաջադիմություն, գործոն:*

Ключевые слова: *высшее образование, выпускник, социологический опрос, результаты опроса, социальное измерение, управление качеством образования, удовлетворенность, бакалавр, магистр, образовательные программы, рассеяние данных, валидность метода, успеваемость, фактор.*

Key words: *higher education, graduate, sociological survey, survey, survey results, social dimension, education quality management, satisfaction, bachelor, master, educational programs, data dispersion, method validity, performance, factor.*

НЕКОТОРЫЕ ИССЛЕДОВАНИЯ И РЕЗУЛЬТАТЫ ОПРОСОВ ВЫПУСКНИКОВ ОТНОСИТЕЛЬНО УДОВЛЕТВОРЕНИЯ УРОВНЕМ ПОЛУЧЕННОГО ОБРАЗОВАНИЯ

В. ЯРАМИШЯН

Одним из важнейщих составляющих процесса управления высшим образованием является изучение качества профессиональной подготовки путем проведения социально-психологических опросов среди студентов и выпускников вузов. Опросы студентов и выпускников вузов по определению состояния их удовлетворенности от полученного образования проводятся во всех вузах. В статье представлены некоторые результаты проведенных опросов выпускников бакалавриата и магистратуры от полученного образования в Арцахском государсвенном университете с соответсвующими выводами и анализом. Выделены те факторы, которые по мнению автора влияют на качество выполнения учебных программ.

SOME RESEARCHES AND RESULTS OF GRADUATES SURVEY CONCERNING SATISFACTION WITH THE LEVEL OF OBTAINED EDUCATION

V. YARAMISHYAN

One of the most important components of Management Process of Higher Education is the research of professional training quality through conducting socio-psychological surveys among students and university graduates. Surveys on identifying students' educational satisfaction are conducted among students and graduates of all universities.

The article touches upon the results, as well as the corresponding analyses and conclusions of surveys conducted among Bachelors and Masters of 2016-2017 Academic year. The factors, which, according to author, influence the quality of implementation of educational programs, are also presented in the article.

Բարձրագույն կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկը մասնագիտական պատրաստման գործընթացի ուսումնասիրությունն է՝ ուսանողների և շրջանավարտների շրջանում սոցիալ-հոգեբանական հարցումներ անցկացնելու ճանապարհով: Ուսանողների և շրջանավարտների մոտ կրթության որակից ստացած բավարարվածության աստիճանի որոշման հարցումներ կատարվում են բոլոր բուհերում: Հոդվածում ներակայացված են 2016թ. և 2017թ. Արցախի պետական համալսարանում ստացած կրթությունից բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածության հարցման որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով և եզրակացություններով: Առանձնացված են այն գործոնները, որոնք հեղինակի կարծիքով ներազդում են կրթական ծրագրերի իրականացման որակի վրա:

Բարձրագույն կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկն, անշուշտ, մասնագիտական պատրաստման գործընթացի ուսումնասիրությունն է՝ նրա մասնակիցների շրջանում սոցիոլոգիական հարցումներ անցկացնելու և սովորողների՝ կրթությունից ստացած բավարարվածության աստիճանը որոշելու ճանապարհով: Ուսանողների և շրջանավարտների՝ կրթության որակից ստացած բավարարվածության աստիճանի որոշման հարցումներ կատարվել են նախկինում և այժմ էլ կատարվում են գրեթե բոլոր բուհերում: Օրինակ, ԵՊՀ-ում շրջանավարտների կանոնավոր հարցումներն իրականացվում են 2009թ.-ից սկսած՝ գտնելով, որ բարձրագույն կրթության որակի մշտական վերահսկումը, նրա կանոնավոր սոցիալական չափումը յուրաքանչյուր բուհի արդիականացման չափանիշներից մեկն է (2, էջ 6) :

Աշխարհի տարբեր երկրների բուհերում նույնպես ուսանողական հարցումներին մեծ տեղ է տրվում՝ որպես կրթության ոլորտի առաջնահերթությունների որոշման հավաստի, գրեթե անսխալ եղանակի: Ռուսական բուհերում այս եղանակով որոշվել են, թե ուսանողներն ինչ գործոններ են առանձնացնում՝ որպես կրթության որակի ապահովման կարևորագույն չափանիշներ: Օրինակ, Ալթայի պետական համալսարանում ուսանողները, որպես կրթության որակի ապահովման առաջնահերթ գործոն, առանձնացրել են դասախոս-հռետորի գործոնը, նշելով, որ նա՝ դասախոսը, պետք է ունենա մի շարք կարևոր հատկանիշներ: Նա պետք է ունենա բարձր շփվողականություն (ընդ որում՝ շփման մեջ լինի հաճելի), կարողանա պարզ, հստակ շարադրել ուսումնական նյութը, ապահովել կոնտակտը լսարանի հետ, որպես անձնավորություն լինի հետաքրքիր, ունենա արտաքին գրավչություն, հստակ առոգանություն և գրագետ խոսք: Այսպիսի դասախոսը, ուսանողների պատկերացմամբ, կկարողանա թուլացնել լսարանի լարվածությունը, լինել օբյեկտիվ՝ գնահատման մեջ, շահագրգռված լինել ուսանողների հաջողության մեջ և, իհարկե, ունենալ հումորի զգացում (3 առ 12.12.2017թ.):

ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներն անց են կացվում գիտական խորհրդի կողմից հաստատված հարցաշարով՝ նրանց վերաբերմունքն ուսման և աշխատանքային գործունեության նկատմամբ բացահայտելու, մասնագիտական և ընդհանուր պատրաստման գործընթացում առկա խնդիրներն ուսումնասիրելու, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված երաշխավորություններ մշակելու և առաջադրելու նպատակով (2, էջ 256):

Սույն հոդվածում ներկայացված են 2016-2017թ.թ. ուսումնական տարում անց կացված հարցումների որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով:

Կազմակերպումը և մեթոդները: Հարցումներն անց են կացվել 2016թ.՝ հարցաթերթիկներով, 2017թ.՝ համակարգչային հատուկ ծրագրով: Համակարգչային եղանակը արդյունավետ է դարձրել անցկացման տեխնիկան, սակայն որոշակի դժվարություն է առաջ բերել՝ մասնագիտական վերլուծության առումով: Ճիշտ կլինի հետագայում հարցումն անց կացնել մասնագետի մասնակցությամբ (սոցիոլոգ, հոգեբան)՝ հարցման մեթոդի նվազագույն կանոնները պահպանելու, լսարանը հոգեբանորեն նախապատրաստելու համար: Չնայած դրան, ընդգրկված ուսանողների զգալի թիվը՝ 279, տվյալների ոչ էական ցրումն ըստ ֆակուլտետների և կիրառված մեթոդի արժանահավատությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ հարցման հավաստիությունը բարձր է և ստացված արդյունքները, ընդհանուր առմամբ, կարելի է ընդունել որպես հիմք՝ եզրակացություններ կատարելու համար:

Ընդհանուր տեղեկություններ: Հարցմանն ընդգրկվել են ԱրՊՀ 5 ֆակուլտետների առկա ուսուցման համակարգի թվով 279 (64)[1] շրջանավարտներ, այդ թվում բակալավրիատ՝ 246 (55) և մագիստրատուրա՝ 33 (9), աղջիկ՝ 247 (62) և տղա՝ 32 (2):

Ըստ ֆակուլտետների, տվյալները բերված են աղյուսակ 1-ում՝

աղյուսակ 1

	ֆակուլտետը	բակալավր				մագիստրոս				ընդամենը հարցվածներ	
		2016		2017		2016		2017		2016	2017
		տղա	աղջ	տղա	աղջ	տղա	աղջ	տղա	աղջ		
	բանասիրական	0	22	0	47	0	0	1	13	22	***61***
	բնագիտական	0	8	18	59	0	0	0	2	8	***79***
	մանկ. և սպորտի	0	8	1	25	0	0	0	3	8	***29***
	պատմ. և իրավ.	0	4	1	46	0	4	1	1	8	***49***
	տնտեսագիտ.[2]	2	10	3	46	0	1	7	5	11	***61***
	անանուն	0	1	0	0	0	4	0	0	5	***0***
	Ընդամենը	2	53	***23***	***223***	0	9	***9***	***24***	62	***279***

Ուսուցման առկա համակարգից հարցման են ենթարկվել թվով 255 շրջանավարտներ, հեռակա համակարգից՝ 24: 2016թ. հարցմանն ընդգրկված են եղել միայն առկա համակարգի

[1] այստեղ և հետագայում փակագծերի մեջ բերված են 2016թ. հարցման տվյալները

2 2016թ.-ին ֆակուլտետը կոչվում էր տնտեսագիտության և ճարտարագիտության

շրջանավարտները: Բակալավրներից 189-ը (45) կամ 75.9%-ը (82%), իսկ մագիստրոսներից՝ 18-ը կամ 54.5%-ը պատրաստվում է շարունակել ուսումը, մյուսները՝ ոչ[1]:

Ուսումնական առաջադիմությունը **-** 2016թ. հարցվածների ուսումնական առաջադիմությունը համալսարանի միջին ցուցանիշներից բարձր է եղել՝ գերազանց՝ 62.5%, լավ՝ 32.8%, բավարար՝ 4.7%, այսինքն, հարցմանը մասնակցել են հիմնականում սովորելու ժամանակ բարձր առաջադիմություն ունեցած շրջանարտները:

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2017թ. տվյալներն՝ ըստ ֆակուլտետների՝

աղյուսակ 2

	Ֆակուլտետ	բակալավրիատ			մագիստրատուրա		
		գեր.	լավ.	բավ.	գեր.	լավ.	բավ.
	բանասիրական	12	31	4	3	11	0
	բնագիտական	12	44	21	1	1	0
	մանկ. և սպորտ	3	21	2	0	3	0
	պատմ. և իրավ.	16	20	11	0	2	0
	տնտեսագ.	22	21	6	2	8	2
Ընդամենը ԱրՊՀ		***65 26.4%***	***137 55.7%***	***44 17.9%***	***6 18.2 %***	***25 75.8%***	***2 6%***

Աշխատանքային գործունեություն: 2016թ. շրջանավարտներից 5-ը կամ հարցվածների 7.8%-ը, ունեցել է մասնագիտությամբ աշխատանք, 2-ը կամ 3.1%-ը՝ այլ մասնագիտությամբ, մյուսները՝ 79 կամ 89.1%-ը, աշխատանք չեն ունեցել: Ընդ որում, աշխատանք չունեցողներից 11-ը (17.2%) գիտեր ապագա աշխատատեղը, մյուսները՝ ոչ: Հասարակական գործունեության մեջ ընդգրկված են եղել հիմնականում բանասիարական ֆակուլտետի շրջանավարտները՝ թվով 15:

Միմյանց հետ փոխկապակցված մի քանի հարցերի 2017թ. պատասխաններ բերված են 3-7 աղյուսակներում:

- Հայտնի՞ է, արդյոք, թե որտեղ եք աշխատելու:

աղյուսակ 3

	Ֆակուլտետ	բակալավրիատ		մագիստրատուրա	
		այո	ոչ	այո	ոչ
	բանասիրական	24	23	7	7
	բնագիտական	31	46	2	0
	մանկ. և սպորտ	11	15	2	1
	պատմ. և իրավ.	9	38	2	0
	տնտեսագ.	12	37	6	6
Ընդամենը ԱրՊՀ		***77 կամ 32.6%***	***159 կամ 67.4%***	***19 կամ 57.6%***	***14 կամ 42.4%***

Նկատելի է, որ պատմության և իրավագիտության, տնտեսագիտության ֆակուլտետների շրջանավարտների համար աշխատատեղ ունենալու հեռանկարն անորոշ է, հավանաբար, աշխատաշուկայի գերհագեցածության պատճառով:

- Այժմ Դուք աշխատո՞ւմ եք:

աղյուսակ 4

	Ֆակուլտետ	բակալավրիատ			մագիստրատուրա		
		ոչ	այո		ոչ	այո	
			մասն.	ոչ մասն.		մասն.	ոչ մասն.

[1] մագիստրոսների՝ ուսումը շարունակելու ցանկությունը մի փոքր տարակուսանք է առաջացնում՝ նրանց կողմից հարցադրումների ճիշտ ընկալման առումով, քանի որ ԱրՊՀ-ն ասպիրատուրա չունի:

	բանասիրական	32	6	9	4	7	3
	բնագիտական	41	12	24	2	0	0
	մանկ. և սպորտ	22	2	2	1	2	0
	պատմ. և իրավ.	37	1	9	1	0	1
	տնտեսագ.	35	7	7	2	7	3
Ընդամենը ԱրՊՀ		***167 67.9%***	***28 11.4%***	***51 20.7%***	***10 30.3 %***	***16 48.5%***	***7 21.2%***

Խիստ ցածր է պատմության և իրավագիտության, մանկավարժության և սպորտի, ցածր է տնտեսագիտության, բանասիրական և բարձր է բնագիտական ֆակուլտետների բակալավր-շրջանավարտների՝ աշխատանքով ապահովված լինելու աստիճանը: Այն, ընդհանուր առմամբ, 2016թ. հետ համեմատ զգալի աճ է ունեցել՝ բակալավրիատում հասնելով մոտ 32%-ի: Մագիստրոսների ցուցանիշն ավելի բարձր է՝ մոտ 70%:

• Ուսումը համատեղե՞լ եք աշխատանքի (մշտական, պատահական) հետ կամ զբաղվե՞լ եք հասարակական գործունեությամբ:

աղյուսակ 5

	Ֆակուլտետ	մշտական աշխատանքի հետ		պատահական աշխատանքի հետ		հասարակական գործունեության հետ	
		բակավր	մագ	բակավր	մագ	բակավր	մագ
	բանասիրական	10	10	11	2	26	2
	բնագիտական	29	1	16	1	32	0
	մանկ. և սպորտ	2	0	9	2	15	1
	պատմ. և իրավ.	5	1	16	0	26	1
	տնտեսագ.	12	8	9	4	28	0
Ընդամենը ԱրՊՀ		***58***	***20***	***61***	***9***	***127***	***4***

Նկատելի է բակալավրիատի շրջանավարտների զգալի ներգրավվածությունը հանրային աշխատանքներում, որի միջոցով, ըստ երևույթին, նրանք փորձել են ինքնահաստատվել, ստուգել իրենց գործնական կարողությունները, ընդ որում, եթե նախորդ հարցման ժամանակ հանրային գործունեության մեջ ներգրավված են եղել հիմնականում բանասիրական ֆակուլտետի շրջանավարտները, ապա այս տարի՝ բոլոր 5 ֆակուլտետների[1]:

• Ո՞ր գործոններն են վճռորոշ դեր խաղացել Ձեր՝ աշխատանք գտնելու հարցում:

աղյուսակ 6

	Ֆակուլտետ	փորձու-սուցում	ծանոթներ, ընկերներ	ԶԼՄ -ներ	իմ անձն. այցեր	իմ որոնում-ներ	զբաղվածու-թյան կենտրոն	այլ
	բանասիրական	9	15	0	18	2	1	33
	բնագիտական	12	23	4	29	5	1	38
	մանկ. և սպորտ	3	2	0	8	2	1	17
	պատմ. և իրավ.	8	6	3	11	1	0	29
	տնտեսագ.	6	10	0	13	3	1	33
Ընդամենը ԱրՊՀ		***38***	***56***	***7***	***79***	***13***	***4***	***150***

Այս հարցին շրջանավարտները

- 38 անգամ (կամ պատասխանների 10.1%-ը, 2016թ.՝ 7.8%-ը) պատասխանել են, որ կարևոր են փորձուսուցման ժամանակ հաստատված կապերը,

[1] Հնարավոր է, որ հասարակական ակտիվություն հասկացության տակ շրջանավարտները հասկացել են միավորների համար պայքարը, ինչը որոշակիորեն կենենգափոխեր հարցաշարի մեջ ընդգրկված հարցադրման իմաստը:

- 56 անգամ՝ 16.1%-ը (2016թ.՝ 6.25%)՝ ծանոթների խորհուրդներն ու առաջարկությունները,
- 7 անգամ՝ 2%-ը (2016թ.՝ 1.6%)՝ ԶԼՄ-ներում հրապարակվող հայտարարությունները,
- 79 անգամ՝ 22.8%-ը (14.1%)՝ անձնական այցելությունները համապատասխան հիմնարկներ,
- 13 անգամ՝ 3.7%-ը (1.6%)՝ աշխատանք որոնելուն ուղղված ջանքերը,
- 4 անգամ՝ 1%-ը (0%)՝ զբաղվածության կենտրոնը,
- 150 անգամ՝ 43 %-ը (14.1%) նշել են այլ գործոններ:

Ստացվում է, որ փաստացի կան այնպիսի գործոններ, որոնք իրականում ներազդում են աշխատանք գտնելու գործընթացի վրա, սակայն հարցաշարը կազմված է այնպես, որ ռեալ չի բացահայտում աշխատանքի տեղավորման գործող օրինաչափությունները:

- Աշխատանքի գտնելու համար ***ԱրՊՀ-ից դուրս կազմակերպվող կրթական ծրագրերի կամ լրացուցիչ դասընթացների*** մասնակցել է 91 շրջանավարտ կամ հարցվածների 32.6 %-ը (2016թ.՝ 20.3%-ը): 188 շրջավարտ նման դասընթացների չի մասնակցել: Աճի միտումները կարելի է որակել որպես իրարամերժ: Մի կողմից ԱրՊՀ-ի համար ցանկալի չէ, որ ուսանողներն աշխատանքի տեղավորվելու համար դիմում են այլ, կողմնակի դասընթացների (դա կարող է նշանակել, որ ԱրՊՀ կրթությունը բավարար չէ աշխատանք գտնելու համար), մյուս կողմից, դրական կարելի է գնահատել այն, որ նկատելի է հանրային ակտիվության աճը:
- ***աշխատանքի ընդունվելու համար առկա խոչընդոտները հաղթահարելու իրենց պատրաստվածությունը*** հարցվածները 2016թ. պատասխանել էին այսպես՝

- լիովին պատրաստ էի՝ 10 (հարցվածների 15.6%, պատասխանողների 37%),
- մասամբ էի պատրաստ՝ 9 (հարցվածների 14.1%, պատասխանողների 33.3%),
-ընդհանրապես պատրաստ չէի՝ 0,
-դժվարանում եմ պատասխանել՝ 8 (հարցվածների 12.5%, պատասխանների 29.6%):

2017թ.-ին ունենք այսպիսի ցուցանիշներ (աղյուսակ 7).

աղյուսակ 7

	Ֆակուլտետ	լիովին պատրաստ էի	մասամբ պատրաստ էի	պատրաստ չէի	դժվարանում եմ պատասխանել
	բանասիրական	27	18	6	10
	բնագիտական	33	24	1	21
	մանկ. և սպորտ	3	15	0	11
	պատմ. և իրավ.	14	13	1	27
	տնտեսագ.	20	17	3	21
Ընդամենը ԱրՊՀ		***97***	***87***	***11***	***90***

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի 29 շրջանավարտներից միայն 3-ը և պատմության և իրավագիտության ֆակուլտետի 55-ից 14 են գտնում, որ պատրաստ են աշխատանքի: Նրանց ցածր ինքնագնահատականը մատնանշում է մասնագիտական պատրաստման որոշ խնդիրների մասին:

Բավարարվածությունը ստացած կրթությունից: Հարցվողը 5 բալանոց համակարգով գնահատել է գործունեության տարբեր ոլորտները: Առաջին հարցախումբը վերաբերվել է ուսուցման որակին: Աղյուսակ 8-ում ընդհանուր արդյունքներն են՝ ըստ ֆակուլտետների:

աղյուսակ 8

	Ֆակուլտետ	մասնագիտ. կարողություններ	տեսական գիտելիքներ	գործնական հմտություններ	օտար լեզվի խմա-ցություն	դասընթացների դրակ /ինդիվիդուալ/	փարձուցումներ արդյունավետ-ության	գնահատման օբյեկտիվություն
	բանասիրական	3.75	3.92	3.3	3.39	3.79	4.05	3.9
	բնագիտական	3.95	3.86	3.28	2.66	3.71	3.98	4.1
	մանկ. և սպորտ	3.41	3.48	3.1	2.93	3.59	4.27	3.72
	պատմ. և իրավ.	3.78	3.74	3.33	3.27	3.84	4.1	3.8

տնտեսագ.	3.71	3.82	3.28	3.43	3.72	3.93	3.93
Ընդամենը ԱրՊՀ՝ 2017	***3.72***	***3.72***	***3.26***	***3.14***	***3.13***	***4.07***	***3.89***
2016	***3.9***	***4.1***	***3.3***	***3.2***	***3.8***	***4.2***	***4.3***

Բոլոր ցուցանիշներով 2016-2017թ.թ. կտրվածքում նկատելի է անկում: Հավանաբար, նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ 2016թ. հարցումն անց է կացվել ապրիլյան իրադարձություններից հետո, նրան հիմնականում մասնակցել են բարձր առաջադիմություն ունեցած շրջանարտներ, ուստի նրանք տրամադրված են եղել լոյալ և նրանց գնահատականները բարձր են եղել: Կարելի է առանձնացնել ևս մի քանի մասնավոր միտումներ.

- մասնագիտական կարողությունների ձեռքբերումը բարձր են գնահատել ռուսաց լեզվի՝ 4.5, քիմիայի՝ 4.67[1] ցածր՝ կերպարվեստի /բակ/՝ 3.5, մանկավարժության՝ 3.3, ֆիզիկայի՝ 3.3, հայոց լ/գ՝ 3.18 և լրագրության՝ 3.3 շրջանավարտները:
- տեսական գիտելիքները շրջանավարտների կողմից նույնպես բարձր են գնահատվում, օրինակ՝ քիմիա՝ 4.67, կենսաբանություն /մագ/՝ 5.0, իրավագիտություն՝ 4.25,
- գործնական հմտությունների թեման միշտ եղել է խնդրահարույց: Այս անգամ էլ շրջանավարտները գործնական հմտությունների որակը գնահատել են բավականին ցածր՝ անգլ. լ/գ՝ 2.48, հ/լ և գրակ.՝ 2.88, աշխարհագր՝ 2.93, ինֆորմ՝ 2.57, մանկ /մագ/՝ 2.33, կերպարվեստ/ բակ/՝ 2.88, տնտ. տես.՝ 3.0 և ֆինանս՝ 2.88: Բարձր է, թերևս, միայն ՆԶՊ՝ 4.33, ռուս. լ/գ՝ 4.42 և ռուս. լ/մագ/ 4.17 գնահատականները,
- թե որքանով են, ընդհանուր առմամբ, օգտակար մատուցվող դասընթացները, կրկին համերաշխություն չկա: Բարձր են նույն ռ.լ/գ՝ 4.42, քիմիայի՝ 4.33, ՆԶՊ՝ 4.33, քաղ. /մագ/՝5.0 գնահատականները,
- օտար լեզուների ուսուցման արդյունավետությանը վերաբերող հարցն, ըստ երևույթին, հարցաշարում կոռեկտ չի ձևակերպված: Համալսարանը, բնականաբար, ոչ մասնագիտական խմբերում կդժվարանա «ապահովել օտար լեզվի բարձր իմացություն»: Ահա թե ինչու հայոց լ/գ մասնագիտության շրջանավարտները օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը գնահատել են ընդամենը 2.35, մանկավարժներինը՝ 2.7, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի շրջանավարտները՝ 2.0-ից մինչև 2.6, պատմությանը՝ 1.8, այն դեպքում, երբ ռ.լ/գ՝ 4.0, ՆԶՊ՝4, կերպարվեստ /մագ/՝ ավանդաբար՝ 5.0,
- բավականին բարձր է գնահատվում փորձուսուցումների արդյունավետությունը: Ռուսաց լեզվի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներն այն գնահատել են համապատասխանաբար 4.67 և 4.83, ՆԶՊ՝ 4.67, պատմության բակալավրի՝ 4.6, քաղաքագիտության մագիստրատուրայի՝ 5.0 շրջանավարտները: Ցածր են ֆիզիկայի, աշխարհագրության՝ 3.37, լրագրության՝ 2.50 արդյունքները,
- դասախոսների կողմից ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությանը տված գնահատականները մեծ շեղումներ չունեն և ընդգրկում են 3.5-ից մինչև 5.0 (կենս/մագ/, կերպ/մագ)՝ հիմնականում տատանվելով 4.0-ի միջակայքում:

Հարցերի հաջորդ խումբը վերաբերում է օժանդակ ծառայություններից բավարարվածությանը.

2016թ. ունեցել ենք այսպիսի արդյունքներ՝

- լսարանների վիճակ և կահավորանք -3.1,
- համակարգչային սրահների մատչելիություն և կահավորանք-3.9,
- համացանցի մատչելիություն- 3.0
- ուսումնական լաբորատորիաների հագեցվածության աստիճան- 2.6,
- գրադարանի և ընթերցասրահի ժամանակակից գրականություն-3.7,.
- գրադարանի և ընթերցասրահի վիճակ և կահավորանք-4.0,
- գրադարանի ընթերցասրահների աշխատաժամանակ և սպասարկում-3.9:

2017թ. հարցման արդյունքները բերված են աղյուսակ 9-ում:

[1] կերպարվեստի մագիստրատուրայի շրջանավարտները հարցմանը լուրջ չեն վերաբերվել, բոլոր հարցերը գնահատել են 5, ուստի նրանց պատասխանները վերլուծության մեջ հաշվի չեն առնվել

աղյուսակ 9

	Ֆակուլտետ	ասարանի վիճակ և կառավարումը	հանրագ. պահանջների մատչ. և կառավարումը	համալսարանի մատչելիություն	աշխատակազմ	գրադ. և ինֆորմ. ժամկից գրագիտություն	գրադ. վիճակ և կառավարումը	գրադ. և ինֆորմ. գրադարանային աշխատանքի կազմակերպում
	բանասիրական	3.1	3.6	2.7	2.0	3.2	3.3	3.4
	բնագիտական	2.7	4.3	3.4	3.3	3.8	4.0	4.1
	մանկ. և սպորտ	4.3	4.4	3.3	2.1	3.4	3.5	3.4
	պատմ. և իրավ.	2.7	3.5	2.7	2.3	3.2	3.4	3.6
	տնտեսագ.	3.6	4.1	3.6	3.2	3.8	3.9	4.0
Ընդամենը ԱրՊՀ՝ 2017		*3.3*	*4.0*	*3.1*	*2.6*	*3.5*	*3.6*	*3.7*
2016		*3.1*	*3.9*	*3.0*	*2.6*	*3.7*	*4.0*	*3.9*

2016-2017թ.թ. արդյունքների համեմատական վերլուծությունը որևէ ուղղությամբ միտումներ չի արձանագրում, քանի դեռ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվել քննարկվող պայմանների բարելավման ուղղությամբ:

Հարցեր՝ ուղղված ընդհանուր բավարարվածությանը: 2016թ. բավարարված են եղել համալսարանի ղեկավարությունից - 4.1, ֆակուլտետի ղեկավարությունից- 4.4, պրոֆեսորա-դասախոսական կազմից - 4.4, ուսանողական կառույցներից - 3.9, դիմումներին և բողոքներին արձագանքելու մեխանիզմներից- 3.5, ընդհանուր առմամբ ԱրՊՀ-ում ստացած կրթությունից -3.9:

2017թ. արդյունքները բերված են աղյուսակ 10-ում.

աղյուսակ 10

	Ֆակուլտետ	համալսարանի ղեկավարությունից	ֆակուլտետի ղեկավարությունից	պրոֆեսորադասախոսական կազմից	Ուսանողական առաջատար կառույցներից	դիմում-բողոքներին ընթացք տալուց	Ընդհանուր առմամբ, ստացած կրթությունից
	բանասիրական	3.5	4.0	4.0	3.3	3.1	4.0
	բնագիտական	4.1	4.5	4.4	4.2	3.9	4.0
	մանկ. և սպորտ	3.5	4.1	3.8	3.8	3.3	3.6
	պատմ. և իրավ.	3.6	4.1	3.9	3.4	3.1	4.1
	տնտեսագ.	4.0	4.3	4.3	4.1	3.7	3.8
Ընդամենը ԱրՊՀ՝ 2017		*3.7*	*4.2*	*4.1*	*3.8*	*3.6*	*3.9*
2016		*4.1*	*4.4*	*4.4*	*3.9*	*3.5*	*3.9*

Արդյունքներից կարելի է նկատել, որ

- հարցման արդյունքների վրա որոշակի ազդեցություն են ունեցել 2016թ. ապրիլյան իրադարձությունները: Այդ ժամանակ համալսարանի ղեկավարությունը որոշակիորեն թուլացրել, իսկ 2017թ.-ին կրկին «ձգել էր պնդօղակները»: Մյուս կողմից, համալսարանում հաճախ կարելի է ականատես լինել, թե ինչպես ուսանողների հետ առնչվող անձանց զգալի մասը գրանցված հաջողությունը վերագրում է իրեն, իսկ դժվարության համար մեղադրում է ղեկավարությանը: Օրինակ՝ ուսանողը հարցնում է, թե ինչու չի լուծվում խնդիրը, իսկ պատասխանատու անձը ասում է. «իրենց հարցրեք, մենք էլ մեղավոր չենք»:

- շարունակում են խնդիրներ ունենալ ուսանողական կառույցները, որոնցում ուսանողների զգալի մասն ընդգրկվում է պրագմատիկ հաշվարկների հիման վրա՝ թոշակ ակտիվության միավոր, միջոցառումների մասնակցություն և այլն:
- ոչ բարձր արդյունավետությամբ է գործում ուսանողների դիմում-բողոքներին, առաջարկություններին ընդառաջելու, նրանց կարծիքները հաշվի առնելու համակարգը:

Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱրՊՀ:

2016թ. շրջանավարտները 70 %-ով պատասխանել են՝ այո, մյուսները՝ ոչ:

2017թ. պատկերը ներկայացված է աղյուսակ 11-ում:

աղյուսակ 11

	Ֆակուլտետ	այո	տոկոս	ոչ	տոկոս
	բանասիրական	40	65.6	21	34.4
	բնագիտական	70	88.6	9	11.4
	մանկ. և սպորտ	22	75.9	7	24.1
	պատմ. և իրավ.	20	40.8	29	59.2
	տնտեսագ.	30	49.2	31	50.8
ԸՆԴԱՄԵՆԸ ԱրՊՀ		*182*	*65.2*	*97*	*34.8*

ԱրՊՀ նկատմամբ առավել լոյալ վերաբերմունք ունեն բնագիտական ֆակուլտետի շրջանավարտները, իսկ պատմության և իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտների մեծ մասը ԱրՊՀ-ն չի համարում «սովորելու տեղ»:

Շրջանավարտներն իրենց առաջարկությունները ներկայացրել են մեծ միջակայքում, ընդ որում նրանց մոտ տարածված է այնպիսի դիրքորոշումը, թե համալսարանը պետք է շարունակի «կազմակերպել, ապահովել, մատուցել, բարելավել, տրամադրել, ստեղծել, հատկացնել, թույլատրել և այլն»: Այս կարգի մեծ թվով «մաղթանքներ» կան: Շրջանավարտները պահանջում են, որպեսզի համալսարանը կազմակերպի էքսկուրսիաներ, արշավներ, երթեր, այդ թվում՝ դեպի ՀՀ, հետաքրքիր միջոցառումներ, պարային ֆլեշմոբեր, մարզական, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ, ընդ որում, պահպանելով արդարությունը, հավասարությունը, զանգվածայնությունը, ակտիվությունը, ժամանակին իրազեկումը: Համալսարանը «պետք է ստեղծի» թատերական, գրական, ստեղծագործական, սպորտային, երաժշտական, հումորային, պարի, ասմունքի, ձեռքի աշխատանքի, լողի, լեզվամտածողության զարգացման, հոգեկարգավորման, մանկավարժի և այլ խմբակներ: Կան ուսանողներ, ովքեր պահանջում են վերացնել «անկապ» ակտիվության գնահատականը: Ոմանք հայտարարում են, որ հարկավոր է վերանայել ուսանողական կառույցների, հատկապես՝ ՈՒԳԸ անդամագրման կարգը[1], քանի որ ձևական է կատարվում, դասախոսները ընդգրկում են ծանոթներին, մյուսները պնդում են, որ, ընդհակառակը, ուսանողական աշխատանքների բնագավառում համալսարանը զգալի ձեռքբերումներ ունի և այլևս ոչինչ փոխել պետք չէ: «Սա, թերևս, միակ ոլորտն է, որտեղ թերություններ չկան»- գրում է շրջանավարտներից մեկը:

Շրջանավարտները նույն չափով պահանջատեր են նաև ***ուսումնական գործընթացի վերաբերյալ***: Առավել «պոպուլյար են» հետևյալ առաջարկությունները. փոխեք քննությունների անցկացման կարգը, տարին երկու անգամ լինի քննություն, քչացրեք հանձնարարությունները՝ ինքնուրույն, ռեֆերատ, մի ծանրաբեռնեք ոչ մասնագիտական առարկաներով, դրանց հարցաշարերը տվեք, որպեսզի հասկանանք, թե ինչ են մեզնից պահանջում դասախոսները, 80 րոպեն հոգնեցուցիչ է՝ ընդմիջեք այն դասամիջոցով, թող դասախոսներն արդար լինեն, բոլորի ներկայությամբ իրենց ծանոթներին բարձր գնահատական չդնեն, դա խիստ ընկճում է մյուսներին, համալսարանում հայտարարեք անգլերենի, ռուսերենի օրեր, պրոյեկտոր ունեցող սենյակում տեղադրեք շերտավարագույր, որ տեսնենք, թե ինչ են ցուցադրում, ուրբաթ օրերը 4-րդ ժամ մի արեք, կրթության որակը բարձրացրեք միջազգային ստանդարտների, այնպես արեք, որ նույն օրը ստուգարք-քննություն, կամ իրար հաջորդող օրերին ստուգարքներ ու քննություններ չլինեն, մագիստրատուրան փակեք:

Շրջանավարտները կուզենային կարգավորված տեսնել նաև մի շարք սոցիալ-կենցաղային բնույթի հարցեր, օրինակ՝ ուսուցումը բոլորի համար պետք է լինի անվճար, լսարանները պետք է լինեն մաքուր, ձմռանը լավ ջեռուցվեն, բարձրացվեն և ժամանակին տրվեն թոշակները, հաճախակի լնեն

[1] 2016թ. աշնանն ընդունվել է ԱրՊՀ ՈՒԳԸ նոր կանոնակարգ

հանդիպումները, հաշվի առնվեն բոլոր կարծիքները, դասամիջոցին լինի մեղմ երաժշտություն, բացակաները մատյաններում չնշանակվեն, լինի WI-FI, այդ թվում՝ հանրակացարանում:

Եզրակացություններ: Արցախի պետական համալսարանն ունի մեծ ներուժ՝ ուսանողների մասնագիտական պատրաստման, այդ թվում՝ ուսումնագիտական գործունեության, աշխատաշուկայի հետ կապերի հաստատման ու ամրապնդման, ուսանողների հետ տարվող աշխատանքների որակի բարելավման, բայցև զգալի անելիքներ՝ լաբորատորիաների ու կաբինետների կահավորման, համացանցից օգտվելու հնարավորությունների մեծացման, լսարանների վիճակի բարելավման, լեզուների ուսուցման որակի, մասնագետների գործնական հմտությունների ու կարողությունների ձևավորման, ուսանողների դիմում-բողոքներին արձագանքելու գործընթացի, ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) գործունեության որակի բարելավման ուղղություններով:

Համառոտագրություններ

ԵՊՀ-Երևանի պետական համալսարան,
ԱրՊՀ-Արցախի պետական համալսարան,
ռուս. լ/գ-ռուսաց լեզու և գրականություն,
անգլ. լ/գ-անգլերեն լեզու և գրականություն,
հ/լ և գրակ.-հայոց լեզու և գրականություն,
աշխարհագր. -աշխարհագրություն,
ինֆորմ. –ինֆորմատիկա,
մանկ.-մանկավարժություն,
մագ.- մագիստրատուրա,
տնտ. տես.-տնտեսագիտության տեսություն,
ֆինանս.- ֆինանսներ,
ՆԶՊ-նախազորակոչային պատրաստություն,
ՈՒԽ-ուսանողական խորհուրդ,
ՈՒԳԸ-ուսանողական գիտական ընկերություն:

Գրականություն

1. ԱրՊՀ կանոնակարգեր, Ստ. ԱրՊՀ հրատարակչություն, 2015թ., 283 էջ, էջ 256
2. /Ա.Գրիգորյան, Մ.Զասլավսկայա, ԵՊՀ շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից. համեմատական վերլուծություն (2011-2013թ.թ. Եր, ԵՊՀ հրատարակչություն, 2015թ. 160 էջ)/ :
3. http://www.akvobr.ru/ocenku_stavit_student.html

Տեղեկություններ հեղինակի մասին.
Վիտյա Յարամիշյան- հոգեբ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը: